

Հարցաթերթ

Աշխարհագրություն առարկայի 2020 թ. դպրոցական
օլիմպիադայի մարզային (քաղաքային) փուլի
(տևողությունը՝ 150 րոպե)
(գնահատման քայլը՝ 0,25 միավոր)

11 - 12 - րդ դասարաններ

1. Թվարկե՛ք աշխարհագրական մտածողության 4 հիմնական հատկանիշները (առանց մեկնաբանության):
..... 1 միավոր
2. Ի՞նչ էք հասկանում «արդյունաբերության տարածքային կազմակերպում» ասելով: Թվարկե՛ք
արդյունաբերության տարածքային կազմակերպման ձևերը (առանց մեկնաբանության)
..... 2 միավոր
3. Ի՞նչ է «Կանաչ հեղափոխությունը»: Թվարկե՛ք 3 զարգացող երկիր, որոնք 1960 – ական թվականներին
իրականացրած միջոցառումների շնորհիվ պարենային ինքնապահովման տեսանկյունից զգալի
հաջողություններ գրանցեցին. 2 միավոր
4. Ֆրանսիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ, որը՝ սխալ: 1,5 միավոր
 1. Մոնակոն գտնվում է Ֆրանսիայի և Իսպանիայի միջև:
 2. Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:
 3. Էլեկտրաէներգիայի արտադրության 3/4-ը տալիս են ատոմակայանները:
 4. Արևմտյան Եվրոպայում ամենախտաբնակ պետությունն է:
 5. Բնակչության գերակշիռ մասը զբաղված է սպասարկման ոլորտում:
 6. Թեթև արդյունաբերության խոշոր կենտրոնը Մարսելն է:
5. Սահմանե՛ք «բնական պայմաններ» և «բնական ռեսուրսներ» հասկացությունները: Բերե՛ք օրինակներ
..... 2 միավոր
6. Ինչի՞ է հավասար Արեգակի ճառագայթների անկման անկյունը Երևանում, դեկտեմբերի 22-ին, հունիսի 22-
ին, մարտի 21-ին և սեպտեմբերի 23-ին, կեսօրին (պատասխանները ստանալ բանաձևերով)
..... 2 միավոր
7. Օրգանական նյութեր սինթեզող կենդանի օրգանիզմները կոչվում են 0,5 միավոր
 1. ռեդուցենտներ
 2. կոնսումենտներ
 3. պրոդուցենտներ
 4. պեստիցիտներ
8. Տրվածներից ո՞րն է ՄԱԿ – ի հատուկ մասնագիտացված բնապահպանական կազմակերպություն 0,5 միավոր
 1. ՅՈՒՆԵՍԿՈ
 2. ՅՈՒՆԻՍԵՖ
 3. ՅՈՒՆԵՊ
 4. ՅՈՒՆԻԿԴՄՍ
9. Ո՞րքան նավթ պետք է այրել (ջերմային գործակիցը՝ 1,5) 6 տոննա քարածխին համարժեք էներգիա
ստանալու համար: 1 միավոր
10. Բացատրե՛ք հիմնական և անցումային կլիմայական գոտիների տարբերությունը (բերել 2 հիմնական և 2
անցումային գոտիների օրինակներ) 2 միավոր
11. Հաշվե՛ք Հրազդան գետի միջին թեքությունը: Անհրաժեշտ թվական տվյալները պետք է իմանալ
(պատասխանը հիմնավորել հաշվարկով) 2 միավոր

12. Աշխարհագրական հետազոտության մեթոդների վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ: **1,5 միավոր**

1. Աշխարհագրական տեսական մեթոդներից լայն տարածում ունի դաշտային (արշավախմբային) մեթոդը:
2. Համագիտական մեթոդները կիրառվում են միայն գիտության որոշակի ճյուղերում:
3. Նկարագրական մեթոդը գիտական ճանաչողության հնագույն մեթոդներից է:
4. Աշխարհագրական հետազոտության մեթոդները լինում են մասնավոր աշխարհագրական և համաաշխարհագրական:
5. Համեմատական աշխարհագրական մեթոդի էությունն այն է, որ համեմատելով աշխարհագրական տարբեր օբյեկտները, փորձում են բացահայտել դրանց զարգացման ընդհանուր օրինաչափությունները և տարբերությունները:
6. Կոնկրետ գիտական մեթոդները կիրառելի են գիտության բոլոր ճյուղերում:

13. Գրե՛ք Արևմտյան Եվրասիի հովտում գտնվող դաշտերի համարները: **1 միավոր**

- | | | | |
|-----------|-------------|---------------|------------|
| 1. Կարնո | 2. Մշո | 3. Ալաշկերտի | 4. Դերջանի |
| 5. Բասենի | 6. Երզնկայի | 7. Մանազկերտի | 8. Կամախի |

14. Թթվային անձրևների առաջացման պատճառ է (են)՝ **0,5 միավոր**

1. մթնոլորտում ածխաթթու գազի առկայությունը,
2. ծծմբային միացությունների արտանետումները,
3. պեստիցիդների չարաշահումը,
4. անկանոն զբոսաշրջության զարգացումը:

15. Նշվածներից ո՞րը Արցախի Հանրապետության բուսաբուծության մասնագիտացված ճյուղ չէ. **0,5 միավոր**

- | | |
|---------------------------|----------------------------|
| 1. կարտոֆիլի մշակությունը | 2. հացահատիկի մշակությունը |
| 3. խաղողագործությունը | 4. պտղաբուծությունը: |

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝

Ա. Թ. Գրիգորյան